

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

SOMMAIRE

PAGE

ԽՐԵԱԳՐԱԿԱՆ

62

Տէր Ներսէսեան Հ. Ն. — Մեծագործ Քա-
հանայապետը 49

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Աննենեան Հ. ՊՕՂՈՍ. — Դատիք Անյապի
անարկ մէկ ճառը 63

ՊԱՏՄԱԿԱՆ

Յոհաննէսեան Հ. ԱՆԴՐԷԱՍ. — Ապետի Կոմսի
զարմանալի կեանքը (շար. եւ վերջ) . . . 70

ԳԵՂԱՐՈՒԵԱՍԿԱՆ

Ճեղձիւրճեան Ս. — Սանդուղի Հայկական
ճարտարապետութեան մէջ (վերջ) . . . 74

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ

ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմութիւն Հա-
յոց ազգամատոյցին (շար.) 77

ԳՐԱԿԱՆ

ՅՈՎՀԱՆՆԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Թողութիւն 83
— Ես կը մեկնեմ 83
— Սիրտ իմ 84
— Ես ինծի հետ 84

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Տէր Ներսէսեան Հ. Ն. — Rév. P. Jean Me-
cerian « La Vierge Marie dans la lit-
térature médiévale de l'Arménie » . . . 86
— Գէորգեան Կարոյի «Ամէնուն Տարեգր-
ք» Դ. տարի, 1956 87
— Գէորգեան Կարոյի «Ես Բնար» . . . 88

ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԹՂԹԱԿԻՅ. — Ողբ. արեւելադէպ մը . . . 69
*** — Յիշատակարան 82
ԹՂԹԱԿԻՅ. — Օր. Մայրա Մընտիկեանի նը-
կարահանողը 85

ARTICLE DE FOND

Der Nersessian P. N. — Le Grand Pontife
Pie XII 49

PHILOLOGIE

Ananian P. Paul — Une homélie inédite
de David l'Invincible 63

HISTOIRE

Fogolyan P. André — La vie étonnante du
Compte Abédik (suite et fin) 70

ARCHITECTURE

Djerahir S. — L'escalier dans l'architectu-
re arménienne (suite et fin) 74

LITURGIE

Hatsouni P. Vardan. — Histoire du Bréviai-
re arménien (suite) 77

LITTERATURE

Hovhannessian P. Vahan. — Pardon . . . 83
— Je m'en vais 83
— O, mon cœur! 84
— Avec moi-même 84

RECENSIONS

Der Nersessian P. N. — « La Vierge Marie
dans la littérature médiévale de l'Ar-
ménie » du Rév. P. Jean Mecorian . . . 86
— « Almanach 1956 » de Garo Kevorkian . 87
— « Nouvelle lyre » chansonnier de Garo
Kevorkian 88

ECHO ARMENIEN

Cor. — Un orientaliste décédé 69
*** — Memorandum 82
Cor. — Exposition des tableaux de l'artiste
peintre Mlle Maïda Mendikian 85



1843 - 1956
ՃԺԴ. ՏԱՐԻ

ԹԻԻ 3
ՄԱՐՏ

ԲԱԶՄԱՎԵԲ

ՀԱՆԳԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXIV^e année, 1956, N. 3 Mars

ՄԵԾԱԳՈՐԾ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ

Անսահման ողբերգութեամբ, դոճարանական ջերմադին իղձերով ու խան-
դաւառ ցոյցերով մէջ՝ բովանդակ կաթողիկէ աշխարհը տօնեց իր Գերագոյն
Հովուապետին Ն. Ս. Պիոս ԺԲ. Պապի ծննդեան ութսունամեակը, որուն զուգ-
ուեցաւ՝ բարեբաւորիկ հանդիպումով՝ նաեւ Քահանայապետական ընտրու-
թեան տասնեւեօթներորդ տարեւարձը:

Հրճուանքի ու ցնծութեան լուսաշող նշոյլ մը՝ Պեռնինեան սիւնադարդ
հրաշակերտէն ցաթելով՝ ծաւալեցաւ ամէնուրեք, յորդեցաւ, գլեց ուղեւա-
նոսի անդունդները, ու միլիոնաւոր հաւատացեալներու կուրծքերուն մէջ բո-
ցակերպեց որդիական սիրադեղ իղձեր, ներդաշնակեց եռանդուն մաղթերդներ,
կրօնապաշտական արտայայտութիւններու ամէնէն փափուկ ձև ամէնէն ազ-
նիւ զգացումներով ակադճուն:

Ու մանաւանդ հերուան այն ծանր հիւանդութեան մտահոգիչ պայման-
ներէն վերջ, ուր մարդկային հնարազիւտ միջոցներէն զատ՝ երկնային ազդե-
ցութիւնն ալ մեծ դեր ունեցաւ անշուշտ, Սրբազան Քահանայապետին վերա-
նորոգ ու կայտառ վիճակը դարձաւ ինքնին նոր դրդապատճառ մը ողբերու-
թեան, որ սիրոյ ու հաւատքի ոսկեղէն օղակներով սերտօրէն միացուց Ս.
Թեան, որ սիրոյ ու հաւատքի ոսկեղէն օղակներով սերտօրէն միացուց Ս.
Թեան, որ սիրոյ ու հաւատքի ոսկեղէն օղակներով սերտօրէն միացուց Ս.
Թեան, որ սիրոյ ու հաւատքի ոսկեղէն օղակներով սերտօրէն միացուց Ս.

Եւ ահա Վատիկանեան դահլիճներէն յաջորդաբար անցան ծիրանեփառ
Հայրերու դառը նուիրական, զեսպաններու չքեղադարդ աւազանին, եկեղեցա-
կաններու անվերջ թափօրը, հաւատացեալներու անհատնում խումբերը, գի-
տական եւ այլ հաստատութիւններու ներկայացուցիչները, մինչեւ անդամ
դպրոցական աշակերտներու եւ անմեղունակ մանուկներու երկնաժպիտ դէմ-
քերը, բիւր շնորհաւորութեանց արտաբերութիւն ուղանաններով:

Տիեզերական ազօթքի ու մաղթանքի այս դաշնակցութեան մէջ, ամե-

նախորին յարգանքով ու որդեական ջերմ դաւանանքով կը բերենք մեր սուրբ բաժինը, « Վասն կենաց Հայրապետին », որպէսզի Աստուած շնորհէ մեզի տակաւին « Ընդ երկայն աւուրս » վայելել անոր լուսաշող վարդապետութիւնը եւ գերազանց օրինակը սրբութեան, որ կ'առինքնէ ժողովուրդներ ու կ'առաջնորդէ սերունդներ դէպի կենսատու աղերը ճշմարտութեան, իբրեւ քաջ Հովիւ, վեհանձն Հովուապետ, փոխանորդ Քրիստոսի եւ անսխալ վարդապետ սուրբ Հաւատքի:


Քաղցր պարտականութիւն մըն է մեզի համար, այս երջանիկ առիթով, ամփոփ տողերու մէջ ուրուագծել Ն. Ս. Պիոս ԺԲ. Քահանայապետի գործունէութեան գլխաւոր տարրերը. դժուարին ձեռնարկ մը միանգամայն, որովհետեւ գործը հրաշապատում՝ զոր գերազանց ձեռնհասութեամբ կը վարէ նա, իբր առաջնորդական վարսամ մը լուսապայծառ՝ համատարած ծովուն մէջ աշխարհի, անբացատրելիօրէն վեր է մեր համադրելու կարողութենէն:

ԱՅԺՄԷԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏԸ


Թնդանօթներու ահեղ բոմբիւններ եւ հրասայլներու մարդախոշոջ ճոխչներ վրդովեցին Պիոս ԺԲ. Պապի քահանայապետութեան խաղաղ արշալոյսը, ու վեց տարի անընդհատ տուայտանքի եւ անլուր տառապանքի ճիչերով դալարեցաւ մարդկութիւնը՝ պատերազմի կրակներուն տակ: Յաջորդ տասնամեակին ալ, թէեւ խաղաղութեան դրօշակը կը ծածանէր երկրէ երկիր, բայց նման խռովայոյզ ընթացքի մը մէջ՝ քաղաքական վերլուծայրումներ, կուսակցական պայքարներ, տարրեր վարչաձեւերու տենչացող խմորումներ, աղանդաւոր ուսուցումներ օրէ՛ օր սողոսկելով ծաւալեցան՝ հին նկատուած քաղաքակրթութեան մը աւերակներուն վրայ: Եւ այս ճգնաժամային դրութենէն՝ նոր աշխարհ մը երեւան նկաւ, նոր պահանջներով եւ նոր վարդապետութիւններով, հետամուտ նորանոր դիտերու, նորանոր մեթոտներու՝ գործելու, քարոզելու եւ հաւատալու անդամ:

Այս քառասյին դրութեան առջեւ, Սուրբ Եկեղեցւոյ Գերագոյն Հովուապետը չսահմանափակուեցաւ լոկ վերացական սկզբունքներու աշխարհին մէջ, այլ ուշադրութեամբ հետեւելով պատմական այս նոր շրջանի առօրեայ յեղաշրջումներուն, խորապէս ուսումնասիրեց բոլոր կենսական հարցերը՝ իրենց բարոյական, քաղաքական, իրաւասական ու տնտեսական տեսակէտներուն մէջ, եւ մինչեւ իսկ իմաստասիրական, գիտական ու դեղարուեստական մարդերուն մէջ տուաւ կենսական լուծումներ, ուղղութիւններ, պատգամներ:

Եւ այս ամէնը՝ ուսուցանելու նոր եղանակով մը. պաշտօնական կոնգրակներէն զատ, ստեղծեց ուրիշ միջոցներ եւ առիթներ՝ ամէնուն եւ ամէն կողմ հասցնելու համար Աստուծոյ խօսքը, Աւետարանին սերմերը (չարժանկար, ձայնաւոր, հեռատեսիլ). եւ ահա ճառեր, բանախօսութիւններ, պատգամներ, հաւաքոյթներ մանաւանդ, որոնց ընթացքին՝ առաջին անգամն ըլլալով պատմութեան մէջ՝ նեղ եկան Ս. Պետրոսի հսկայ տաճարին որմերն անդամ:



Ն. Ս. ՊԻՈՍ ԺԲ. ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ



Ու ծագեցաւ փրկարար այդը (5 Յունիս 1944) . ազատարար բանակները խաղաղութեամբ մտան քաղաք : Եւ քաղաքը դղրդաց : Նոյն իրիկունն իսկ հըսկայ ցոյց մը կաղմակերպուեցաւ Վատիկանի հրապարակին մէջ, ուր հարիւր հազարէ աւելի քաղաքացիներու ուրախ աղաղակներուն մէջ, պատշգամբէն երեւցաւ Պիոս ԺԲ . իր շնորհակալութիւնը բարձրացնելու առ Աստուած . մինչ վարէն, հսկայական դանդուածը՝ « defensor civitatis » տիտղոսով կ'ողջուէր իր ազատարար Հայրը :

Պատերազմէն վերջ՝ տնտեսական տաղնապ, բարոյական տաղնապ . ահա երկրորդ պատերազմը, աւելի ահաւոր, որու ընթացքին անկրօն ու անասունաժողովուրդներ մուտ կը դործէին լորձնաշուրթն խոստովանելով, ի վնաս քրիստոնէութեան :

Եւ ահա խաղաղութեան մեծ Առաքեալին նոր պաշտօնը . կաղմակերպել նիւթական այս կարօտութիւնը բուժող հոգածու մարմիններ, յաղթական ու պարտուած ազգերու միջեւ ստեղծել սիրոյ համերաշխ ոգի մը՝ քրիստոնէական դրոշմով : Ու զրպարտութիւններու եւ մինչեւ անգամ նախատինքներու տարափին տակ՝ շարունակեց իր խաղաղասէր ուղղութիւնն ու պորձունէութիւնը . մինչեւ անգամ ուղեց իրաւական դեմքի վրայ հիմերը դնել միջազգային պատժական օրէնքին, հեռացնելու համար աշխարհէն ապապայ պատերազմի մը վտանգը, մանաւանդ հիւլէական եւ ջրածնային ռումբերու եւ նորանոր զէնքերու ահաբեկիչ երեւոյթներուն ի տես :

Աներկիւղ դատաւիտեաց ցեղային աստիճանները, տեղահանութիւնները, զինուորական խժոժութիւնները, բանակային հաւաքատեղիներու մէջ դորձուած աննկարագրելի նախճիրները, մարդ-անհատին բարձրութիւնն ու արժանապատուութիւնը ցայտեցնելով, մանաւանդ նկատի առած անոր քրիստոնէական շնորհն ու աստուածային որդեգրութեան նկարագիրը :

Սաղաղասիրական այս գործունէութեան մէջ է՞ արդեօք իրական դիմադիժը Քրիստոսի Փոխանորդին : Քրիստոնէութիւնն ինքնին ծագեցաւ խաղաղութեան աւետիսով, եւ մարդացած Փրկչին վերջին իղձերն եղան իր իսկ խաղաղութիւնը աւանդել իր աշակերտներուն :

ԳԵՂԱՐՈՒԵՍԱՍԵՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ

Յրանսացի իմաստասէր գիտնական մը, Gabriel Marcel, Վատիկան կատարած այցելութենէ մը վերջ՝ կ'ըսէր բարեկամի մը . Մենք Յրանսացիներս վարժած էինք Եկեղեցւոյ պաշտօնական լեզուն նկատել՝ լատիներէնէն վերջ՝ մերինը : Պիոս Ժ . Պապը կոտրեց այս աւանդութիւնը, եւ մենք չստացածուեցանք : Այսօր հանդարտած ենք . ներկայ Պապին օրով՝ բոլոր լեզուներն ալ պաշտօնական են դարձած Եկեղեցւոյ մէջ :

Արդարեւ Պիոս ԺԲ . անսխալ կը խօսի ու կը դրէ բոլոր մեծ ազգերու լեզուներով : Փարիզի Նոթրը Տամի ունկնդիրները ժամանակին կը հիանային մինչեւ անգամ իր շեշտաւորումին վրայ, ու Յրանսական Ակադեմիան իր ոսկեղէն մետալով կը փառաւորէր զինքը :

Գրական հարուստ հորիզոններ կը պարզեն իր ճառերը, մշակոյթի ամէն մարզերու մէջ . ու նա դիտէ Կաճառական բաղմատեսակ ներկայացուցիչներու առջեւ իսկ ճարտարօրէն ներկայացնել համադրական այնպիսի տեսութիւններ, ամէնէն արդիական գիտերու տուեալներու եւ նոյնիսկ ֆիզիքական օրէնքներու թուաբանական տարազներուն ճշգրիտ թուարկումներով, որ իրենք իսկ մասնագէտներն հիացած, « c'est étourdissant » գոչած են յաճախ : Աւելին . դիտէ այդ բոլորին մէջ տալ ի'ր ալ մասնագիտական ուղղութիւնը, հաւատքի գերբնական օծութիւնը, միեւնոյն լոյսի աղբիւրին ուղղելով ամէն գիտութիւն :

Հնախօսական արժէքներու գերազանց սիրող, իր կարգադրութեամբ եւ քաջաբերանքով առաջ տարուեցան Ս . Պետրոսի տաճարին ներքեւ կատարուած պեղումները : Պատմական մեծ նշանակութիւն ունեցող եղելութիւն մըն էր, որու ընթացքին ի յայտ եկան քրիստոնէութեան առաջին դարէն մնացորդներ, հնամեայ աւանդութիւններն ու նուիրական ըմբռնումներն ամրացնող դրական փաստեր : Կոստանդինեան շինութիւններ, որմեր ու կամարներ պեղուեցան, որոնք հաստատեցին Վատիկանեան բլուրին նուիրականութիւնը . իսկ այնտեղ թաղուած նահատակներու նշխարներն ու նմարները ցոյց տուին՝ հնախօսական ապացոյցներու լոյսին տակ, Առաքելապետին գերեզմանն ըլլալու հաւաստիքը :

Հետամուտ եւ սիրող Ս . Գրքի բնագրի հարազատութեան աշխատանքներուն, մեծ գոհունակութեամբ ողջունեց Սաղմոսներու լատիներէն նոր թարգմանութիւնը՝ երբայական հարազատ բնագրին վրայէն, կատարուած մասնագէտ ուսուցչապետներու կողմէ, իր իսկ զրդումով . եւ յատուկ վճռագրով մը (1945) կը յանձնարարէր այդ թարգմանութիւնը ներմուծել արեւմտեան Եկեղեցւոյ ժամասացութեան կարգին մէջ :

Սրբազան երգն ու երաժշտութիւնը առանձին տեղ մը ունին Պիոս ԺԲ . ի գործունէութեան մէջ . կարեւոր թելադրութիւններ կու տար այդ մասին ալ վերջերս « Musicae sacrae » (1955) կոնդակով, ուր յետ դրուատելու երգին դերը եւ թուելու անոր օգուտները, կը սահմանէ այն տարրերը՝ որոնց դործադրութեամբ պիտի ծաղկի Եկեղեցիներու մէջ մասնաւորապէս ժողովրդական սրբազան երաժշտութիւնը, Աստուծոյ փառքին եւ հաւատացեալներու բարեպաշտութեան ի նպաստ :

ԱՌԱՋՆՈՐԴ ԿՂԵՐԻՆ

Պիոս ԺԲ . իր հայրական սրտին ամէնէն գորովալիւր լարերը կը վերապահէ քահանայութեան պատրաստուող հոգիներուն, որոնք օր մը աստուածային իշխանութեամբ օծուած՝ շարունակողները պիտի ըլլան Քրիստոսի փրկադորձութեան գերին :

« Menti nostrae » (23 Սեպտ . 1950) չըջարեւականով բացուեցան պայծառ հորիզոններ այս մարդին մէջ ալ : Հեղինակաւոր եւ յստակատես հասողութեամբ՝ այնտեղ մանրամասնօրէն կը շօշափուին քահանայական կեանքի

պատրաստություններու դաստիարակութեան արդիական հանդամանքները. անոնց կըթուփենը, անոնց ընտրութիւնը, հոգեկան հրահանգումները, սրբութեան դիմելու ազդակները, կատարելիք ուսումները, իւրաքանչիւրին Ֆիլիքական կարողութիւններուն եւ ընդունակութեան համեմատ՝ տրուելիք ուղղութիւնը, ու մինչեւ իսկ կարգ մը առողջապահական պարագաներ, ինչպէս բնակարան եւ այլն....:

Այստեղ ալ կ'ուզէ որ արդի մարդուն բոլոր հոգեկան պահանջները դո-հացնող քահանաներ պատրաստուին, որոնք անբասիր պարկեշտութեամբ, գիտակից նուիրումով ու կուսակրօն ապրումով, կարող ըլլան խոռվայոյզ աշխարհի նիւթապաշտ ըմբռնումներուն մէջ քարոզել Աւետարանի լոյսը եւ բաշխել զայն ծարաւի ու վաստակեալ հոգիներուն, որոնք իրական հանդիստը պիտի գտնեն միայն աստուածային սիրոյն մէջ:

Քրիստոս պէտք է ապրի քահանային մէջ, եւ անոր անձին մէջ՝ պէտք է ներկայանայ ընկերութեան: Ահա կորիզը Պիոս ԺԲ-ի ուսուցումներուն, որոնց լրիւ դործադրութեան մէջ նա իւր յուսայ տեսնել մարդկութեան բարօրութիւնը եւ զանդուածովի դարձը՝ նիւթապաշտութենէն դէպի հոգեկան ար-ժէքները:

ՀԱՅՐ ԲԱՆՈՒՈՐԻՆ

Աշխատաւորի կեանքն ու անոր տնտեսական վիճակի բարեփոխան խրն-դիրն ալ առանձին ուղղութեան առարկայ եղած է Պիոս ԺԲ-ի յղացած վե-րանորոգման բազմակողմանի ծրագրին մէջ: Հոգիէն դատ, Ֆիլիքական ու նիւթական տարրն ալ ուղած է բարձրացնել, միշտ առաջնորդուած աստուա-ծային յայտնութեան եւ ուղղամիտ բանականութեան լոյսէն:

Երեք են գլխաւոր յիշատակարանները, ուր այս հարցով զբաղած է խո-րագէտ. երեք ճառեր են, ուղղուած նախ Քրիստոսեայ Գործառններու Բն-կերութեան Միջազգային Միութեան (UNIAPAC), 7 Մայիս 1949ին. եր-կրորդը՝ Ընկերաբանական Ուսումներու Միջազգային Համաժողովին (3 Յունիս 1950), եւ հուսկ՝ Գործատէրներու եւ Գործավարներու Քրիստոսեայ Միու-թեան Համաժողովին (31 Յունուար 1952):

Շեշտելով մարդուն եւ անոր աշխատանքին անձեռնմխելի նուիրականու-թիւնը, Պիոս ԺԲ. կը հաստատէ որ տնտեսական աշխարհը՝ պետական հաս-տատութիւն մը չէ ի բնէ, այլ կենսունակ ստեղծագործութիւնը ազատ անհատ-ներու, կամ ազատօրէն կազմուած ընկերութիւններու ձեռնարկներուն: Աշխա-տանքի պարտքն ու իրաւունքը, հետեւաբար, չեն ծաղիր ընկերութենէն, այլ կը բղխին ինքնին մարդուն բնութենէն. ասկէ՝ ազնուութիւնը աշխատանքին, նոյնիսկ իր ամենախոնարհ ձեւին մէջ: Աշխատաւորն ալ պէտք է ունենայ իր մասնակցութիւնը ընկերական կազմին մէջ, նոյնիսկ պատասխանատու դե-րերով. եւ հաւասար իրաւունքով, պէտք է որ կարենայ բաշխել իր զաւակ-ներուն՝ մշակոյթի հասարակաց բարիքները: Աշխատաւոր ու գործատէր պէտք են համերաշխօրէն մարդկայնացնել իրենց փոխադարձ յարաբերութիւնները,

որպէսզի գործատունը վերածուի աշխատող ընկերութեան մը, ուր հարկ չըլ-լայ աշխատաւորին բռնի միջոցներու դիմելու իր արդար վարձքին ի խնդիր:

Միւս կողմէ մոռնալու չենք որ անհատական սեփականութիւնը հիմնա-քար մըն է տնտեսական եւ ընկերային արտադրող իրաւակարգին մէջ, սեր-տօրէն կապուած մարդկային անձին արժանապատուութեան եւ զարգացումին հետ. բնութիւնն ինքնին կը պահանջէ որ մարդիկ սեփականատէր ըլլան, եւ երբ սեփականատէր չեն՝ սեփականատէր դառնան (Ծննդեան ձառ., 1942):

Հետեւաբար Պիոս ԺԲ. կը դատապարտէ դրամատիրական ներկայ ըն-կերա-տնտեսական այն իրաւակարգը՝ որ հաշտ չէ արդարութեան հետ, ու կը յանձնարարէ որ բարեկարգուի այդ դրութիւնը՝ համեմատականութեան սկզբունքով եւ պետութեան կողմէ հարկ տեսնուած արդար միջամտութիւն-ներով: Այս մարդկայնացումը տնտեսական աշխարհին՝ պիտի իրադործուի ո՛չ թէ յեղափոխութիւններով, այլ բարեշրջումով:

Այս բոլորն աւանդելու միջոց, Պիոս ԺԲ. կը յայտնուի ոչ միայն իբր դերազանց իրաւագէտ եւ ընկերաբան, որու ոսկի տողերուն վրայ երկար կը խորհին համալսարաններու մասնագէտ ուսուցչապետներ, այլ գլխաւորապէս՝ Քրիստոսի սիրոյ եւ աղքատութեան վարդապետութիւնը գործադրող եւ զայն մեր ժամանակի պահանջներուն պատշաճօրէն յարմարցնող Հայր մը, որ բո-լորին կը դռէ. «Եկայք առ իս ամենայն վաստակալք եւ բեռնաւորք, եւ ես լորին կը դռէ. «Եկայք առ իս ամենայն վաստակալք եւ բեռնաւորք, եւ ես հանդուցից դձեղ» (Մատթ. ԺԱ. 28):

Հովուապետին խօսքերը արդէն իսկ սկսած են ցոյց տալ որոշ արդիւնք-ներ. կազմակերպուած են քրիստոնեայ ընկերութիւններ՝ որոնք կը զբաղին բանուորին էական հարցերով. դործի հայթայթման, բժշկական օգնութեան, ընտանեկան նպաստներու, զաւակներու կրթութեան եւ այլ կենսական խըն-դիրներու լուծման հետամուտ:

Աշխատաւորին վիճակը նուիրականացնելու համար է որ վերջերս նոր տօն մըն ալ հաստատեց, Ս. Յովսէփ աշխատաւորի տօնը, հիւսնութեան պատ-կերին տակ, զոր պիտի կատարեն Մայիս 1ին:

ԱՐԵՒԵԼԱՍԷՐ ՀՈՎՈՒՍՊԵՏ

Քսաներորդ դարուն փայլող արեւելասէր քահանայապետներու շարքին մէջ, ամէնէն կարկառուն դէմքն է Պիոս ԺԲ. իր գործունէութեամբ եւ ու-սուցումով: Կը բաւէ ակնարկ մը տալ տարեգրութեան:

Արեւելածէս ժողովուրդներու սիրով բարախուն իր սիրտը հայրագութ արտայայտութիւններով հիւրասիրած ու պատուած է յաճախ յորեկինական յիշատակներու առիթով, ներկայացուցիչներն ու Առաջնորդները արեւելեան համայնքներուն, եւ սիրադեղ խօսքերով քաջալերած է անոնց գործունէու-թիւնը՝ Կաթողիկէ Եկեղեցւոյ ծոցին մէջ: Այսպէս 1939-1940ի ընթացքին՝ մարոնիներ, յոյներ, ուկրայինացիներ, եթովպացիներ եւ ուսմանացիներ սի-սիրալիր ընդունելութիւն գտած են Վատիկանեան յարկերուն տակ:

Վերջին պատերազմի եւ յետպատերազմեան շրջանին, անհուն ցաւով կը

Ա. Ղ. Բ. Ի. Ի. Բ. Ե. Բ.

- Acta Apostolicae Sedis* (Commentarium Officiale) 1939-1956, Typis polyglottis Vaticanis.
I discorsi e radiomessaggi di S. S. Pio XII, vol. 1-16, Milano, "Vita e pensiero", 1938-1946; Tip. Poliglotta Vaticana, 1946-1955.
Discorsi agli intellettuali di S. S. Pio XII (1939-1954), Tip. Poliglotta Vaticana, 1955, pg. VIII-544.
Enciclopedia Cattolica, Città del Vaticano, 1948-1954, Vol. IX. col. 1543-1552, Pio XII.
L' Osservatore Romano - 2 Marzo 1956, N. 52 (29.114), pg. 1-16.
L' Osservatore Romano - 5-6 Marzo 1956, N. 55 (29.117) pg. 5.
 Բազմավեպ 1939, թ. 3-5, էջ 91-96 (ընտրությունների ամօթիւ)
 Բազմավեպ 1949, թ. 3-4, էջ 49-52 (Քահանայությունիւ 50 ամեայ յորեկանին ամօթիւ):

Ն. Ս. ՊԻՈՍ ԺԲԻ ԳՈՐԾԵՐՈՒՄ ԶԱՅԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- "*Summi Pontificatus*," - Անդրանիկ Կոնդակ Քահանայապետական (քաղաքագրական)
 Բազմավեպ 1939, թ. 11-13, էջ 274-278: 1940, թ. 4-7, էջ 81-87
 "*Orientalis Ecclesiae decus*," - Ս. Կիրեղ Աղեքսանդրացիի մահուան 1500ամեակի ամօթիւ
 Բազմավեպ 1944, թ. 7-12, էջ 49-60
 Նոյնը, լոյս տեսած առանձին հատորիկով՝ Վ. Լենտիկ, Ս. Ղազար, 1945, էջ 32.
 Ողջըն Նորբնտիր Կարդինալներուն (որոնց մէջ նաեւ Ամեն. Վ. Կարգ. Աղաճանեան)
 Բազմավեպ 1946, թ. 4-6, էջ 85-96
 "Ենեղեան ճառ," 1948ի Գեղար. (հատուածաբար)
 Բազմավեպ 1949, թ. 1-2, էջ 1-4
 Ան Միտրարեան Ոռչիտն (Միտրար Աբրահամ մահուան 200ամեակին ամօթիւ)
 Բազմավեպ 1949, թ. 7-12, էջ 11-15
 "*Menti Nostrae*," - Յորդոր ուղղափառ աշխարհի կղերին՝ քահանայական կեանքի սրբութեան վրայ
 (23 Սեպտ. 1950), Թարգմանեց Ն. Քերոբէ Ա. Զարեան: Տպ. Ս. Ղազար 1951, էջ 64.
 "*Fulgens corona gloriae*," (Տիրամօր Անարատ Յղութեան հռչակման Ա. դարագարին ամօթիւ)
 Բազմավեպ 1954, թ. 5, էջ 102-116

ԴԱԻԻԹ ԱՆՅԱՂԹԻ

ԱՆՏԻՈՒ ՄԷԿ ՋԱՌԸ

Ս. Ղազարու մատենադարանի թիւ 239, ԻԳ ճառընտիրը(1) ունի Եկեղեցւոյ նուիրուած ներքողեան մը Դաւիթ Անյաղթ Հայկազն վարդապետի անունով, տակաւին անտիպ: ԻԳ ճառընտիրը օրինակուած է Ներսէս Կրակցիէ «Ի Հայկազեան թուականի 22Գ համարի (1335) ի վնան հրէշտակապետացն Միքայելի եւ Գարրիելի եւ ի տեղիքս տէրունականի Երուսաղէմ քաղաքի»: Վերնագիրն է «Դաւիթ Անյաղթ վարդապետի Հայկազնի ասացեալ գովեստ ներքողական ի սր. Կաթողիկէ Եկեղեցի, ի սր. Յարութիւն եւ ի սր. Գողգոթայ, ի սուրբ քաղաքին Երուսաղէմի»: Այլ «Վասն որոյ մեր ի մաղթանս հայցեալ...» Թղ. 209բ-212ա:

Նոյն ճառին օրինակ մըն ալ կը գտնուի Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի թիւ 282 ճառընտիրն մէջ(2), որ նոյնպէս օրինակուած է Ներսէս Կրակցիէ, մերինէն չորս տարի առաջ, այն է «Ի 22 թուին Հայոց» եւ նոյն տեղը: Ճառին վերնագիրը լաւագոյն պահուած կը թուի ըլլալ Երուսաղէմի օրինակին մէջ. «Դաւիթ Անյաղթ վարդապետի ասացեալ գովեստ ներքողական ի սր. Կաթողիկէ Եկեղեցի»: Այլ. «Վասն որոյ մեր ի մաղթանս հայցեալ...»:

Ճառին երկու օրինակներն ալ միեւնոյն էրինքն եւ հաւանաբար միեւնոյն գաղափար օրինակէն առաջ եկած ըլլալուն՝ երկուքն ալ միեւնոյն թերութիւնը ունին,

այն է՝ ինչ որ Ներսէս Երուսաղէմի օրինակին վերջաւորութեան գրած է՝ թէ «Ով եղբարք օրինակն երեքիջեն էր եւ լիզած նա կարճ ի կարճոյ գրեցաւ ճառս, կարգաւ եւ մի մեղադրեր»(3): Ասոր համար անշուշտ կը զգացուի առաջին մասի մեծ պակաս մը, վասնորի ճառը կը սկսի Վասն որոյ բացատրութեամբ, որ անշուշտ եղբարք քաղաքութիւնն էր նախորդ հատուածի մը:

ՃԱՌԻՆ ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Հ. Բ. Սարգիսեան իր Մայր Յուցակին(4) մէջ խօսելով վերոյիշեալ ճառին վրայ, կ'անդրադարձնէ թէ ան կրնայ կապուած լինել Դաւիթ Անյաղթի անունով հրատարակուած խաչի ճառին հետ: Սակայն Հ. Գ. Զարպէանալեան, որ ծանօթ եղած է նոյն ճառին, կը գրէ իր Պատմութիւն է Հայ Դպրութեան մէջ(5). «Դաւիթ անյաղթ ուրիշ գրուածք մըն ալ կայ հետեւեալ խորագրով - Դաւիթ Անյաղթ վարդապետի Հայկազնի գովեստ ներքողական ի սր. Եկեղեցի... Երուսաղէմ - զական ի սր. Եկեղեցի... Երուսաղէմ - Որչափ ալ ոճոյ նմանութիւն են թաղերնք, կը գրէ ան, այս ճառին եւ իր անունը կը զրէ ան երկասիրութեանց մէջ, բայց հարազատութիւնը միշտ տարակուսական կը մնայ»:

Հակառակ Զարպէանալեանի այս տարակուսին, մեզի կը թուի թէ Եկեղեցւոյ նուիրուած այս ճառը խսկապէս խաչի

(1) Հ. Բ. Սարգիսեան, Մայր Յուցակ Զեռագրաց, Վենետիկ, 1924, Բ., էջ 323-4, թիւ 222:

(2) Ն. Պողարեան, Մայր Յուցակ Զեռագրաց Ս. Յակոբեանց, Երուսաղէմ, 1954, Գ., էջ 99:

(3) Ն. Պողարեան, Անդ, էջ 101:

(4) Հ. Բ. Սարգիսեան, Անդ, էջ 337:

(5) Հ. Գ. Զարպէանալեան, Հայկական Հին Դպրութեան պատմութիւն, 1897, էջ 324: